Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-211-25.03.2022-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 9.1-րդ կետից, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 9.1-րդ կետից, 135-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերից և 146-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերից «թափուր» բառը հանել:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջին ընթերցում

Կ-211-25.03.2022-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ~~ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ~~ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 1-ին մասի 9.1-րդ կետից, ~~հանել «թափուր պաշտոնում» բառերը:~~

~~***Հոդված 2.*** Օրենքի~~ 9-րդ հոդվածի 2-րդ մասի 9.1-րդ կետից, ~~հանել «թափուր պաշտոնում» բառերը:~~

~~***Հոդված 3.*** Օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետից հանել «թափուր» բառը:~~

~~***Հոդված 4.*** Օրենքի~~ 135-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, ~~եւ~~ 2-րդ կետերից և ~~հանել «թափուր պաշտոնում» բառերը:~~

~~***Հոդված 5.*** Օրենքի~~ 146-րդ հոդվածի~~ում.~~ 1-ին, 2-րդ, 3-րդ մասերից «թափուր» բառը հանել:

~~1) 1-ին մասում «թափուր պաշտոնում» բառերից հետո լրացնել «, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաեւ մինչեւ թափուր տեղի առաջացումը» բառերը.~~

~~2) 2-րդ մասում «անդամի թափուր պաշտոնում» բառերը փոխարինել «անդամի պաշտոնում» բառերով, իսկ «համապատասխան թափուր պաշտոնում» բառերը փոխարինել «համապատասխան պաշտոնում» բառերով.~~

~~3) 3-րդ մասից հանել «թափուր» բառը.~~

~~4) լրացնել 6-րդ մաս հետեւյալ բովանդակությամբ.~~

~~«6. Մինչեւ ինքնավար մարմնի անդամի պաշտոնը թափուր մնալը ինքնավար մարմնի նոր անդամ նշանակվելու դեպքում ինքնավար մարմնի անդամի պաշտոնավարման ժամկետը սկսվում է այդ պաշտոնը թափուր մնալու օրվանից:»:~~

Հոդված ~~6~~2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-211-25.03.2022-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	Վերնագրում	Նախագծի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենք»:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
2.	Կառավարություն	Հոդված 1-ին	Նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի 8-րդ	**Ընդունվել է**	**Ընդունվել է**

			հոդվածի 1-ին մասի 9.1-րդ կետից, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 9.1-րդ կետից, 135-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերից և 146-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերից «թափուր» բառը հանել:»:		
3.	Կառավարություն	Հոդված 2-րդ - 5-րդ	Նախագծից հանել 2-5-րդ հոդվածները:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**